

իրենց բազկներն ի պատրաստութիւն ոստման, և կը նետուէին յառաջ: Անոնց ցատկած գետինը բահով կը խառնէին, որպէս զի ընկնելու պարագային չվաստէին: Աստման երկայնութիւնը կը չափէին իսկոյն՝ երբ վազը կատարուէր: Կը յիշուին պատմութեան մէջ ոստումներ 50, 52, 55 ուց, որոնք չափազանցութիւն կը նկատուին ունանցէ:

Կար վազի ձև մ'ալ, որով խաղակիցներէն մին կը կանգնէր ուղիղ, և ուրիշ մը կ'ոստնուր անոր զլիխն վրայէն¹: Ծանօթ էր Յունաց նաև ձողով վազըն արգելքի մը վրայէն²:

Ե. — ԾԱՆՐԱԿԱՐՁՈՒԹԻՒՆ³

Յունաց ցով տեսանց վերե վազի տեսակ մը, որ կը կատարուէր՝ ձեռաց մէջ բռնելով զոյդ մը ծանրոցներ. և ասոնց կը դիւրացնէին ու կը զօրացնէին մարմոյն սատումը կային նաև աւելի ստուար ծանրոցներ, զոյս պարզապէս կը բարձրացնէին գետնէն, ու թեթեւ շարժումներ կը կատարէին, ջղերն ամրապնդելու նպատակաւ. և այս հրահանգութիւնը կ'ապահովէր մարզկաց յաջողութիւնն ուրիշ իւսդեռ մէջ⁴:

Եթէ Յունաց ցով բաւական հին է այս հրահանգը, Հայոց համար անծանօթ չէր կինար լինել ի հնուց, թէկ անոր յիշատակութեան ցիշ մ'աւելի ուց հանդիպինց, այս ինքն ժի՞ զարուն: Միխթար Գոշ է անոր մասին խօսողը. և մեզ կը ներկայացնէ՝ ոչ իր բազմութեան առջև կատարուած բան մը, ինչպէս էին միւս հանդիպական ուսմունց, այլ աւելի երիտասարդաց մէջ եղած մրցանց մը: «Սովորեն երիտասարդը, կ'ըսէ, վայրապար զմիմեանս շարժել բասեալ ինչ ծանուն, որպէս բարինս և այլ այսպիսիս»: Յայտնի է՝ որ նպատակն էր իրարու ոյժը փորձել,

և այդ փորձին մօտեցողները, զորս կրնանք ծանրաբարք կոչել, պէտք էին կանխաւ մարզուած լինել առանձնաբար կամ ընկերաբար. Ձիրար այդ խաղին «շարժելու» կամ կրապուրելու համար՝ զրաւ մ'ալ կը զնէին մէջտեղ. «Փ պատճառ վայրապար դրասոց», կը յարէ նոյն վարդապետը:

Այդ զրաւը եթէ կարելի էր շաճիլ, բայց զիտենք՝ որ կրնար նաև շատ թանգ արթել, անհաւասարութիւն մտնելով ծանրութեան ու բարձողի ուժին մէջ, և մինչև իսկ մահ պատճառել երթեմն: Հայ օրէնսդիրը նկատելով այս վտանգը, և ուղելով խափանել զայն ստեղծող խաղն իսկ, վաստակութեան պարագային տուզանցի կենթարկէ զանոնց՝ որ զրաւ զրեր ու մրցութեան առիթ առուեր էին⁵:

Թերեւս բնաւ չգործազրուեցաւ տուզաննելու օրէնքդ, մինչդեռ խաղը կար ու պիտի մար, ինչպէս Միխթարէն յառաջ՝ նոյնպէս վերջն ալ:

Հ. Վ. Հատուես

(Հարութակելի)

ԼԵԶՈՒԱԳԻՑԱԿԱՆ

Հ. Յ. ՏԻՄԻՆ ՆՈՐ ԲՈ. Ո. Ե. Բ

ԿԱԽՈՒԱԳԻՐԻ ՄԵԶ

(ապ. Թէֆէւս 1914)

Ազգացեղուրին «ազգականութիւն»: Յետքազում ըննութեանց, թէ ոչ զտցի ազգացեղութիւն ի մէջ նոցա (խօսեցելոց) ... օրհնեցնեն զնշանն (էջ 191). - Երուսաղէմի 1651 թուի կանոններէն է, ուստի շատ յետին, կազմութեամբ ալ անմիտ բառ:

Այնելի «պղծել, ապականել, աղտոտել». Քանզի աղծեաց նա զուրքը ամուսնութիւնն և առուն կոխեաց (էջ 210): — Բառին արմատն է աղծ = աղոտ, որմէ կային զանազան ածանցներ. ինչ, աղծուրին, աղծակիթ, աղծապղծուրին. բայց բայց այս հատուածին մէջ միայն երկան կու զայ:

1. Dar. *Saltus*. — 2. Կոյն՝ *Contominoボロボロ*. — 3. Կը բարեե՛ քառանալ ինչ ծանուն բացարութեան. Դատ. իջ: — 4. Dar. *Halter*. — 5. Դատ. իջ.

Ալկեղցարար «վրան չգդշալով, չափսուալով, անկեզծօրէն»։ Ժողովրդականը զամենայն պառլու և երախայրիս երիցանց մատուցեն անցեղջարար մտօք, զի եղիցին ընդունելի (էջ 55)։

Անխոսովվանարար «առանց խոսուովանելու, անզեղ»։ Քանզի նորա անխարապէս և անխոսովվանարար, ոչ լեալ մաքուր, մերձենան յահաւոր խորհուրդն (էջ 159)։

Անքակիլ «անքակ՝ անբաժան մնալ, չըակուիլ»։ Խառնեաց ընդ իւր Աստուածութեանն, վասն զի անքակեցաւ ի մարմիքնութեամբ (էջ 152)։

Ապունա «հոսում կամ վիժում ունեցող»։ Վասն որ ապունա է կամ ձգէ կամ ածէ ինն ամ ապաշխարեսցէ (էջ 119)։ Թէ բառը այսպիսի նշանակութիւն մը ունի՛ կ'երևայ նաև յաջորդ կանոնէն՝ ուր կ'ըսուի, թէ «վասն որ ընդ հեթանոսի կայ և մեղանչէ ընդ նոսաւ հինգ ամ ապաշխարեսցէ»։ Ասկէ զատ կրնանց բառս համեմատել յն։ Ճոճրօւա«հոսում» ճոճրօօօց «հոսում ունեցող» և կամ ճուռքէ «միջածամանակ դուրս ձգել» բաներուն հետ, թէն ասոնցմէ ոչ մէկուն ճշտի համապատասխան չըլլայ։ Արդեօք աւելի մերձաւոր ասորական ձեւ մը կայ։

Ապունա «տիկ»։ Թէ անիդին պարտէ համարել զձէթդ, որ բերեն յԱսորոց ապուլայիւր, մեռելոտիւր և յանտուր անսանոց թէ ոչ (էջ 134)։ Այս բառը միևնուն վկայութեամբ ունի նաև նշի, որուն ունեցած ձեռազիրը սակայն ունի ապունա ընթերցուած։ Այս ձեռով ալ կը դնէ նշի, յիշելով նաև ուրիշ ձեռազիրներու ապունայիր, ապունակիր ընթեցուածները։ Նշի, ինչպէս նաև յարիշ ձեռազիրներու ապունայիր, ապունակիր ընթեցուածները։ Նշի, ինչպէս նաև ջախջ. Բառ. կը մեկնեն «կապիկի մորթով շինուած տիկ»։ Ալժ. Բառ. չեմ գիտեր ինչ պատճառակ՝ բոլորովին ջնջած է բառ։ Ցեղականը կը ապունա մէջ կը կոչուի bast (նստիլ), Երբ մէկը մարմաւոր իշխանութեան կողմէ մերբակալուելու վտանգին ենթակուած է իսկոյն կը փախչի մզկիթ մը կամ այլ սրբավայր մը և կամ օտար պետական հաստատովիւն մը, որմէ չի կրնար իշխանութիւնը բռնի դուրս կորզել։ Բայց բռնապատանը չի կրնար այսպէս ըլլալ, քանի որ շարունակութեան մէջ կ'ըսուի թէ «ի հրապարակ մի՛ իշխեսցէ զալ, ընկերը և աշխարհ ամենայն մի՛ հաղորդեսցին ընդ նմա, մինչև՝ թէ ինքն իցէ ի պղծութեան՝ ի սրբութիւն եկեսցէ, ապա թէ ինքն ոչ իցէ ի պղծութեան, զննուանիս և զծուայս տացէ ի ձեռու եպիսկոպոսին զլիսաւորի ի կշտամբութիւն»։

ասոր համար է որ կանոնին մէջ հարց կը տրուի թէ պէտք է խղճել թէ ոչ, նշի համարելով «կապիկի մորթ»՝ անշուշտով ուզած է բառ կապել պրո. ապունայ «կապիկ» բառին հետ, որ աւելորդ և անտեղի է ։ Ըստ իս բառին լաւագոյն ընթերցուածն է ապունայ. ապիկա՝ ինչպէս այ վերջաւորութիւնն և ասորոց յիշաւակութիւնն կ'երևայ, անպատճառ ասորական փոխառութիւն մ'է ։ Դժբախտարար ձեռքիս տակ չունիմ ասորերէն բառարան մը՝ ըսածն փաստօրէն ստուգելու և ճիշտ մայր ձեւ տալու համար։

Ասպեկտարար «առացեալներու կողմէն բարբառուած՝ ըսուած»։ Հրեշտակացարող և առացելարարբառ պատմի աւետաբեր ենորդն յարութիւնն (էջ 160)։

Բնապատան «դիմազարձ, բռնի միջոցներու զիմելով՝ իշխանութեան անձնատուր չեղող»։ Եթէ ի նախարարի տան գոյցին պղծութիւնն, կամ կին նորա կամ դուստր կամ որդի կամ ինցն գըլխովի և ոչ զննուանիսն ի ձեռու տացէ եպիսկոպոսին և ոչ ինքն ի սրբութիւն զարձցի, բռնապատան կամիցի մինել, ամենայն տամբ իւրով և ծննդովց և կենօց նզովեալ լիցի (էջ 81)։ — Նայելով բառին կապելուան՝ կարելի է կարծել որ բառս նշանակէ ճիշտ այն՝ ինչ որ ճիմայ Պարսկաստանի մէջ կը կոչուի bast (նստիլ), Երբ մէկը մարմաւոր իշխանութեան կողմէ մերբակալուելու վտանգին ենթակուած է իսկոյն կը փախչի մզկիթ մը կամ այլ սրբավայր մը և կամ օտար պետական հաստատովիւն մը, որմէ չի կրնար իշխանութիւնը բռնի դուրս կորզել։ Բայց բռնապատանը չի կրնար այսպէս ըլլալ, քանի որ շարունակութեան մէջ կ'ըսուի թէ «ի հրապարակ մի՛ իշխեսցէ զալ, ընկերը և աշխարհ ամենայն մի՛ հաղորդեսցին ընդ նմա, մինչև՝ թէ ինքն իցէ ի պղծութեան՝ ի սրբութիւն եկեսցէ, ապա թէ ինքն ոչ իցէ ի պղծութեան, զննուանիս և զծուայս տացէ ի ձեռու եպիսկոպոսին զլիսաւորի ի կշտամբութիւն»։

Գեղցեղ «գեղցեղանը»։ Զսաղմուն գեղ-

զեղով հնչեցուցանեն (Էջ 51): Բառիս ածանցները ծանօթ են, բայց արմատական գեղցի՝ որ նոր զարկանութեան մէջ կը գործածուի, առաջին անգամ երկան կու զայ հին մատենազբութեան մէջ:

Դիասասաց « անազանոս, հեղեցույ մէջ զիրը կարդացող տիրացու ». Գրոց դասասաց՝ բազմաց վկայութեամբ լիցին, զիտունը և ամենայն զրոց վարժը և տեղեակը և փորձ ամենայնիւ (Էջ 176):

Դիասափոխել « խելօրնալ, նախկին անկարգ վարքը թողուլ ». Ապա թէ այրն չարարարոյ ինչ է կամ պոռնիկ կամ հանգանակող և արբեցող, կամ այլ ինչ խեղական, բանիւ և խրատու կշտամբեցեն զայրն, ի կարգ ածեն և հնազանդեցուացեն զերկուին. եթէ ազատ է, տուզանօց և խրատու ի կարգ ածեն. ապա թէ դիասափոխեցի այրն, կին պաշտեցէ զնա (Էջ 66): — Խնդիրը մարդ ու կնոջ անհամաձայնութեան մասին է. կանոնը կնոջ մասին պէտք եղածն ըսելէ յետոյ, կ'անցնի ամուսինին. և եթէ ասիկա յանցաւոր է՝ կը նշանակէ պատիժներ, տուզանօց, ևն. եթէ ամուսինը դիափոխի, կինը այն ժամանակ պիտի ծառայէ անոր. Այս բոլորէն կ'երեւի որ դիափոխիլ կը նշանակէ « ուղղուիլ, խելքի զալ, զմերէն ազատուիլ »: Նշի կը զնէ դիարափիլ « այսահարիլ ». այս իմաստը անտեղի և անյարմար է. մարդուն խրատներ պիտի տան, տուզանօց պիտի նշանակեն և եթէ մարդը այսահարի (?) կինը պիտի ծառայէ (!) անոր:

Երախայպէս « երախայի՝ անկնունը մարդու պէս ». Ոչ խոստովանեալք զյանցանս անձանց՝ հաղորդիցին (Էջ 156):

Զեխարարոյուրին « որկրամոլութիւն ». եթէ իցէ ոց, որ յառաջազոյն կերիցէ և արբցէ ի տան իւրում, ի հաց պատարագին մի՛ իշխանցէ երթալ... զի զեխարարոյութիւն է այն (Էջ 27):

Զրել « մերժել, դրֆել ». Հայեաց, Տէր, յաղօթս և ի պազատանս մեր, մի զբեր զուխտ բու և մի՛ մերժեր զմեզ ի

մառանզութենէ քումմէ (Էջ 146): — Զոր բառէն:

Զօշոտ « որկրամոլ ». Եւ զշարաթ և զկիւրակէ որոշեցուր յուրախութիւն ճաշակման զօշոտացն (Էջ 156). Զշարաթ և զկիւրակէ յուրախութիւն պայծառութեան ի կթոց կերակուրս հրամայեմք լուծանել զօշոտացն և որովայնամոլիցն (Էջ 162): Նշի ունի այս բառը և ըստ Հին բռանորոշարար կը մեկնէ « յոռի, զազիր, յայրատ են ». վերի վկայութիւնները կը ճշգին ստոյգ կերպով բառին իմաստը՝ բրնձ « շատակեր, որկրամոլ ». Պահոց մէջ շարաթ և կիրակի օրերը նաւակատիք են զբրն անոր համար՝ որ որկրամոլները դժո՞ն չման և պահերէնի սպառ չհրաժարիք:

Իշուան. ձեռվ և նշանակութեամբ անստոյգ բառ. Զայն քահանայն, որ զայս առնէ, ժողովուրդն իրբն զնայր տեսանեն և իրբն զիրիստոս թեթև պահեն ի շարէ, իշուան շտան, յամնայն արդեանց պատուդան, վաստակացն օգնեն, զմատաղենիսն տան և խաչահամբոյր (Էջ 185): Հասարակորէն զատելով՝ կարելի էր զնել ինշուան « նեղութիւն », որով իշուան շտան « նեղութիւն շեն տար »: Կարելի չէ մոտածել իշուան բառի մասին, որովհետև տեղը ընդհակառակը կը պահանջէ իինան տան: Բայց կրնանց մտածել նաև որ ի հոս նախդիր ըլլայ, որով բառը կը զառնայ շտան. և ի շուան տալ ոճը կը զառնայ բոլորովին անստոյգ:

Հ. Աւանիս

(Ծարութակելի)

Մափիկներ կան՝ որոնք հարկ է որ քիչ ապրին, ապա թէ ոչ գոյներնին կը կորսնցնեն:

*

Աէզը աւելի արագ կ'աճի և կ'ողողէ՝ քան վարդի մացառ մը:

*

Զանանք միշտ իրերու լաւ կողմը տեսնել, և երբ սաստիկ անձրէն՝ ըսնեք. Ո՛րքան լաւ պիտի ընէ զաշտին: